

ԲՃՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԹԵՐԱՊԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1920—1950)

Հայաստանում սովետական կարգերի հաստատման պահին կային ընդամենը 57 բժիշկ և 17 հիվանդանոց՝ 614 մահճակալով [1, էջ 19, 315]: Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի 1920 թ. դեկտեմբերի 22-ի դեկրետով ստեղծվեց Առողջապահության ժողովրդական կոմիտարիատ, որի իրավասության տակ անցան հանրապետությունում գտնվող բոլոր բժշկասանիտարական հիմնարկները: Առողջապահական մարմինների առաջնահերթ խնդիրն էր բարելավել հիվանդանոցների աշխատանքը, բազմապատկել մահճակալների ու բժշկական կադրերի թիվը:

1922 թ. Երևանի պետական համալսարանում բացվեց բժշկական ֆակուլտետ [2, գ. 124, թ. 81], իսկ մեկ տարի անց հիմնադրվեց տրոպիկական ինստիտուտը: Սովետական իշխանության առաջին տարիներին ձեռնարկված լուրջ միջոցառումների շնորհիվ թերապևտիկ հիվանդները ոտանոտ էին ամբուլատոր, իսկ մի շարք բնակավայրերում նաև ստացիոնար բուժօգնություն: Թերապևտիկ օգնության կազմակերպման, կադրերի պատրաստման և թերապիայի զարգացման գործում մեծ աշխատանք կատարեցին 1923—26 թվականներին հիմնադրված բժշկական ֆակուլտետի (այնուհետև ինստիտուտի) ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի (Լ. Ա. Հովհաննիսյան), ֆակուլտետային թերապիայի (Ա. Ա. Մելիք-Աղամյան) և հոսպիտալ թերապիայի (Ռ. Ն. Գյանջեցյան) ամբիոնները:

Միաժամանակ սկսվեց հանքային ջրերի և բուժավայրերի ուսումնասիրությունը, որի շնորհիվ 1925 թ. շահագործման հանձնվեց Արդնու առողջարանը [3, գ. 355, թ. 41]: Արդեն 1925 թ. հանրապետությունում գործում էին 22 հիվանդանոց, 8 տրոպիկայան, 29 բժշկական, 18 բուժական կայան, 12 բուժարան և նույնքան էլ դեղատուն, որոնք սպասարկում էին թերապևտիկ հիվանդներին [4, էջ 212]: 1920 թվականի

57-ի փոխարեն 1925 թվականին կային 146 բժիշկներ, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում թերապևտները: 1927 թ. բժշկական ֆակուլտետը տվեց իր առաջին շրջանավարտները:

Արդեն 1930 թ. հանրապետությունում կային 127 թերապևտներ և 227 թերապևտիկ, 262 բնդհանուր մահճակալ [3, գ. 767, թ. 3—4]: Տարեցտարի ավելի ամուր հիմքերի վրա էին դրվում բնակչության թերապևտիկ օգնության կազմակերպման աշխատանքները: Հայրենական մեծ պատերազմի նախորդ տարում Սովետական Հայաստանում կային 202 թերապևտ և 598 թերապևտիկ մահճակալ [5, էջ 19, 60]:

Պատերազմի առաջին իսկ օրերին գործող բանակի շարքերը մեկնեցին բազմաթիվ հայ բժիշկներ, այդ թվում նաև թերապևտներ, որոնց զգալի մասը աշխատում էր ռազմաճակատում: Քիչ չէր նաև նրանց թիվը, ովքեր աշխատում էին հանրապետության էվակու-հոսպիտալներում:

Թերապիայի ասպարեկում մեծ հաջողություններ ձեռք բերվեցին հետպատերազմյան հնգամյակի ընթացքում: Արդեն 1950 թ. Սովետական Հայաստանում կային ավելի քան 501 թերապևտ և 1150 թերապևտիկ մահճակալ [3, գ. 920, թ. 6, 18]: 15 շրջաններ ապահովված էին թերապևտիկ մահճակալներով, իսկ գյուղական վայրերում կար 20 շրջանային և 53 տեղամասային հիվանդանոց [3, գ. 413, թ. 3, 20]: Թերապևտիկ բազաների և կադրերի քանակական ու որակական աճը նպաստում էր թերապիայի զարգացմանը, օգնում մշակելու գործնական բրժշկագիտության հրատապ հարցերը: Թերապևտների ավագ սերնդի ներկայացուցիչների հետ և նրանց անմիջական ղեկավարությամբ գիտական ասպարեկ իջան բազմաթիվ շնորհալի երիտասարդ գիտնականներ:

Թերապիայի ասպարեկում գիտահետազոտական աշխատանքներ էին կատարվում բժշկական մի շարք հիմնարկներում. դրանց մասնակցում էին ոչ միայն Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի (հետագայում բժշկական ինստիտուտ) պրոֆեսորադասախոսական կազմը և գիտական հիմնարկների գիտաշխատողները, այլև կլինիկաների, հիվանդանոցների բազմաթիվ բժիշկներ: Այդ տարիներին թարգմանվել ու հրատարակվել են դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ: Հիշատակության արժանի են նաև հայ գիտնականների ինքնուրույն աշխատությունները, այդ թվում՝ Լ. Ա. Հովհաննիսյանի «Ներքին հիվանդությունների դիագնոստիկայի դասագիրքը», Ա. Ա. Մելիք-Աղամյանի «Թերապևտիկ հիվանդների հետազոտման սխեման», Ռ. Ն. Գլան-ջեցյանի «Մեղի անալիզը» և այլն: Ուշադրության կենտրոնում էին երկրամասային հիվանդությունների և, առաջին հերթին, մալարիալի հա-

մաճարակագիտութեան, ախտածնութեան, պատճառագիտութեան, կլինիկայի, բուժման ու կանխարգելման հարցերը:

Տրոպիկական ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ կազմեցին և հրատարակեցին «Մալարիա», իսկ Ռ. Ն. Գյանջեցյանը՝ «Մալարիայի կլինիկան» աշխատութիւնները: Վերջինում մանրամասնորեն վերլուծվում են մալարիայի կլինիկայի պարագիտողութիւնը և առանձին օրգանահամակարգերում առաջացած փոփոխութիւնների հետ կապված հարցերը [6, էջ 157]:

Հաշվի առնելով մալարիայի ախտորոշման ժամանակ հանդիպող մի շարք դժվարութիւնները, մշակվել և կիրառութիւն էր գտել, այսպէս կոչված անտիգենային մեթոդը: Ներմաշկային ներարկվող անտիգենը տալիս էր հիպերգիկ պատկեր: Քանի որ որոշ դեպքերում դրական ռեակցիա էր ստացվում նաև առողջների մոտ, այդ եղանակին տրվում էր միայն օժանդակ դեր: Բազմաթիվ ուսումնասիրութիւններ են կատարվել հատկապէս մալարիայից առաջացած կոմայի, մասնավորապէս նրա կլինիկայի ու բուժման վերաբերյալ: Հաստատվել է որոշ էնդոկրին գեղձերի, այդ թվում հարվահանագեղձերի դերը: Այդ գեղձերում տեղի ունեցող ախտաբանական փոփոխութիւնները իրենց ազդեցութիւնն են ունենում մալարիայով տառապող հիվանդների մոտ առաջացած կոմայի կլինիկական պատկերի վրա: Միաժամանակ անառարկելիորեն հաստատվել է, որ կոմայի կլինիկական արտահայտութիւնները խիստ բազմաձև են՝ մենինգոէնցեֆալիտային, առեակտիվ և այլն:

Ախտածնութեան մեջ մեծ տեղ էր տրվում ալերգիկ, տոքսիկ և մեխանիկական բնույթի բազմաթիվ ազդակներին, որոնցից յուրաքանչյուրը առանձին դեպքում լինելով գերակշռող, տալիս էր այս կամ այն կլինիկական պատկերը: Հաճախ նկատվում էր նաև երիկամների ախտահարում:

Նկատի ունենալով, որ մալարիայի ժամանակ շի բացառվում անակրնկալ կոմայի վիճակն ու մահը, մեծ տեղ էր տրվում ժամանակին ախտորոշմանը և շտապ միջամտութեանը: Միաժամանակ հնարավոր էր համարվում կոմայի և հատկապէս նախակոմային վիճակի վաղաժամ ախտորոշումը (Լ. Ա. Հովհաննիսյան): Ապացուցվել է, որ մալարիայով հիվանդի մոտ ստեղծվում է սիրտ-անոթային համակարգի ախտահարման սպառնալիք, ուստի անհրաժեշտ էր համարվում հատուկ ուշադրութիւն դարձնել սիրտ-անոթային համակարգի վրա, որը հնարավորութիւն կտար հենց ծագման պահին հայտնաբերել այդ բարդութիւնները և բուժել (Ա. Ա. Մեխրե-Աղամյան) [7, էջ 257—259]: Այդ բարդութիւնները, որ հիվանդների մոտ արտահայտվում էին սրտի խփոցի, ցալի և այլ ձևերով, կարող էին հանդես գալ որպէս ֆունկցիոնալ փոփոխութիւն-

ներ կամ արշան շրջանառության ծանր անբավարարություն, կախված մալարիայի ձևից, տեղությունից և օրգանիզմի սեակախիվականությունից: Մալարիայի ժամանակ սրտի ախտահարումը կրում է առաջնային բնույթ, և սրտի պսակաձև անոթների արշան շրջանառության խանգարման հետևանքով սրտամկանում վարզանում են զիտարոֆիկ փոփոխություններ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մալարիայի ժամանակ ստորին ծայրանդամների սիմետրիկ զանդրենան կապված է հիվանդության հետևանքով առաջացած ֆունկցիոնալ և օրգանական փոփոխությունների հետ: Հիմնական պատճառը մալարիայի վարակն է, որը մի կողմից առաջ է բերում արշան, սիրտ-անոթային համակարգի, մյուս կողմից հյուսվածքների և արյունատար անոթների սեակախիվության փոփոխություններ: Արտի գործունեության թուլությունը, անոթների ներուզեն նեղացումը և արշան կանգը ստեղծում են բարենպաստ պայմաններ զանդրենայի առաջացման համար [8, էջ 116—124]: Հաստատվել է նաև, որ մալարիան բացասաբար է անդրադառնում նաև կրուպոզ թորորերի, տուբերկուլոզի և շնչառական օրգանների մի շարք հիվանդությունների բնթացքի վրա: Հաճախ թորերում առաջանում են ախտաբանական փոփոխություններ ու բարդություններ, որոնք բժիշկների կողմից չեն մեկնարանվում և վերադրվում են այլ հիվանդությունների: Հաստատվել է, որ մալարիայի առկայության դեպքում կրուպոզ թորորերը ավելի ծանր բնթացք են ունենում:

Փխավել որոշ հեղինակների անհիմն ու կլինիկական տեսակետից վնասակար կարծիքը, թե իբր գոյություն ունի հակամարտություն տուբերկուլոզի և մալարիայի միջև [9, էջ 87—91]: Ուսումնասիրություններ են կատարվել բացահայտելու մալարիայի ժամանակ փայծաղի չափերի, ձևի և ֆունկցիայի փոփոխությունները: Հաստատվել է, որ մալարիայով հիվանդի փայծաղը մեծանում է, ձևափոխվում, փոխվում են նաև նրա ֆունկցիոնալ հատկությունները [1, էջ 662]: Փայծաղի մեծացումն ու ձևափոխումը բացասաբար է անդրադառնում հարևան օրգանների նորմալ գործունեության վրա: Մեծացած փայծաղը ճնշելով ստամոքսին, խանգարում է նրա ֆունկցիան, առաջացնելով լայնացում և իջեցում: Մալարիայի ժամանակ հաճախ կարող են լինել նաև ստամոքսաբորբեր, որոնք անցնում են հակամալարիային միջոցներով բուժումից հետո: Նկարագրվել է նաև սուր որովայնի ախտանշանները, որը կարող էր սխալ ախտորոշման տեղիք տալ [10, էջ 234—242]: Ապացուցվել է, որ մալարիայով հիվանդների սուր որովայնի ախտանշանները կարող է առաջանալ որովայնի անոթների խցանման, ար-

յունագեղումների, վեզետոններողների և այլ դեպքերում և հիմնականում պահանջում է կոնսերվատիվ բուժում:

Պարզվել է, որ մալարիան բացասաբար է անդրադառնում նաև ներքին սեկրեցիայի գեղձերի գործունեության վրա: Նշվել են մի շարք գեղձերում տեղի ունեցող տարատեսակ ախտահարումները, որոնք արտահայտվում են մակուղեղային գաճաճության, ոչ շաքարային միզածորության, լորձային այտուցի, բրոնխախտի և այլ երևույթներով: Լինում են նաև վահանագեղձի, սեռական և այլ ախտահարումներ: Բացահայտված է նաև մալարիայի կալմալուծող ազդեցությունը ժողովրդական տնտեսության, ինչպես նաև բնակչության ֆիզիկական զարգացման ցուցանիշների վրա: Հանրապետության այն շրջաններում, սրտեղ մալարիան մեծ տարածում էր ստացել, նկատվել է ֆիզիկական զարգացման դանդաղում, բնակչության բնական աճի և կյանքի միջին տևողության նվազում [11, էջ 70—74]: Ուշադրության արժանի են նաև մալարիայի հետևանքով առաջացած սակավարյունության, նեֆրոպաթիայի, հեմոստազիկ դիսթեզիների և այլ հարցերի շուրջը կատարված աշխատանքները: Հաստատվել է, որ մալարիայի հետևանքով ախտահարվում են նաև երիկամները, սովորաբար նեֆրոզո-նեֆրիտի ձևով: Վերջինս ընթանում է մեծ այտուցների երևույթներով, իսկ խրոնիկ ընթացքի ժամանակ կարող է առաջացնել երիկամների անբավարարություն [12]: Մեծ ուշադրության են արժանացել նաև մալարիայի ժամանակ օրգանիզմի նյութափոխանակության ընթացքում տեղի ունեցող տեղաշարժերը, լյարդում տեղի ունեցող դիստրոֆիկ փոփոխությունները, ինչպես նաև ճարպային ու լիպոլիզ փոխանակության խանգարումները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մալարիայով հիվանդների լյարդի ֆունկցիոնալ ախտաբանության մեջ կարևոր դեր ունեն նաև ճարպա-լիպոլիզային փոխանակության խանգարումները: Արյան մեջ, ի հաշիվ ալբումինների, իջնում է սպիտակուցների քանակը և ալբումին-գլոբուլինային գործակիցը: Հիպոպրոտեինէմիան կապված է մալարիայի վարակի ազդեցության հետևանքով լյարդի ֆունկցիայի և նրա մազանոթների փոփոխությունների հետ [13, էջ 177—180]: Ուսումնասիրությունները հաստատել են այն կարծիքը, որ մալարիայի ժամանակ մեծապես խանգարվում են նյութափոխանակության բոլոր տեսակները: Մասնավորապես պարզվել է, որ լյարդի ախտահարման հետ կապված ածխաջրածնային փոխանակության խանգարումը որոշակի փոխադարձ կապի մեջ է խանգարված ֆոսֆորային փոխանակության հետ [14, էջ 75—79]: Իջնում է նաև C-վիտամինային փոխանակությունը: Մալարիայով տառապող հիվանդների մոտ C-վիտամինոզի և հիպովիտամինոզի երևույթները հիմնականում նկատելի են դառնում

լլարդի և փայծաղի զգալի ախտահարումներն, լլարդ-փայծաղային ախտանշանների, ինչպես նաև կոմատոզ մալարիայի ժամանակ: Կատարվել են ուշադրութան արժանի մի շարք աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն է եղել հաստատել վեղեկատարի նլարդային համակարգի առաջնային և շն տեղաշարժերը, որոնք միշտ չէ որ հայտնաբերվում են կլինիկական անալիզներով ու ախտաբանա-անատոմիական հետազոտություններով [15, էջ 80—89]: Այդ աշխատանքները ցույց են տվել, որ մալարիայի ժամանակ հումորալ տեղաշարժերը կրում են բացարձակապես պարասիմպատիկ բնույթ: Պարզվել է նաև, որ համեմատաբար խիստ արտահայտված ալետիլստիլնային կրկարածե ռեակցիա ստացվում է մալարիային կոմայի ժամանակ: Գեռևս վերջնականապես լուծված չէր մալարիայի կլինիկական դասակարգման հարցը:

Նրևանի մալարիայի և բժշկական պարազիտոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի կլինիկական բաժնի աշխատակիցների մի խումբ մշակից մալարիայի նոր դասակարգում, որի համաձայն հիվանդությունն, ըստ կլինիկական արտահայտությունից, բաժանվում է շորս հիմնական խմբի: Այդ դասակարգումը բնորոշվեց և կիրառություն դտավ հանրապետության բազմաթիվ բուժհիմնարկներում, նպաստելով մալարիայի ախտորոշման և բուժման գործին: Կլինիկայի և ախտորոշման հարցերի հետ մեկտեղ բազմաթիվ ուշագրավ աշխատանքներ են կատարվել նաև հիվանդության բուժման ասպարեզում: Փորձարկվել են բազում նոր պրեպարատներ և բուժման եղանակներ, որոնցից գործնական կիրառություն են գտել առավել արդյունավետները [16, էջ 198—212]:

Առաջարկվել է մալարիայի անընդմեջ զուգորդված բուժման եղանակ, որի կլինիկական կիրառումը տվել է զոհացուցիչ արդյունքներ [17, էջ 93—100]: Այդ եղանակով բուժման ընթացքում առանձին կլինիկական ցուցանիշները՝ հիվանդի կշռի, արյան կազմի, լլարդի և փայծաղի փոփոխությունները զգալիորեն մոտենում են նորմային, ռեցիդիվներ ալելի քիչ են լինում: Զգալի աշխատանքներ են կատարվել նաև ոչ սպեցիֆիկ միջոցներով, այդ թվում նաև Հայաստանում հայտնի ժողովրդական բժշկության միջոցներով, արյան փոխներարկումներով մալարիայի բուժման ուղղությամբ: Լավ արդյունքներ են ստացվել հատկապես արյան փոխներարկումներից, թեև որոշ դեպքերում նկատվել է հիվանդության պատկերի սրում: Ախտորոշման ընթացքում որոշակի տեղ տալով ոսկրածուծի պոնկցիային, մալարիայի հետևանքով առաջացած սակավարյունության դեպքում լավագույն կենսաբանական խթանիչ էր համարվում արյունաբուժությունը: Սակավարյունության դեպքում

քում հատկապես գոհացուցիչ արդյունք էր ստացվում, երբ հակամալարիային միջոցները ղուգորդվում էին էրիթրոցիտային դանգվածի հետ: Բուժման ոչ սպեցիֆիկ եղանակների հայտնաբերման ուղղությամբ կատարված աշխատանքների ընթացքում մշակվել է փայծաղալին դիետայով բուժման եղանակ, որը մալարիայի ձգձգվուլ ձևերի, սակավարյունության և կախեքսիայի դեպքում տալիս էր լավ արդյունք [18, էջ 25—29]: Լավանում էր հիվանդների ընդհանուր վիճակը, փոփոխված արյան կազմի քանակական ու որակական ցուցանիշները մոտենում էին նորմային: Գրական փոփոխություններ էին տեղի ունենում նաև սրտամկանում, լյարդում ու փայծաղում [19]:

Որպես բուժիչ ազդակ որոշակի տեղ էր հատկացվում լեռնային կլիմային, որի պայմաններում առաջին հերթին բուժվում էին մալարիայի դժվարբուժելի ձևերը, այդ թվում նաև սակավարյունությամբ և ոչ խիստ կախեքսիայով ուղեկցվող դեպքերը [20, էջ 84—92]:

Թերապևտների ուշադրության կենտրոնում են եղել սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները: Մշակվել են սրտաբանության բազմաթիվ հարցեր, որոնք ունեն ոչ միայն տեսական այլև գործնական մեծ նշանակություն: Ուսումնասիրվել են ծայրամասային արյունատար անոթների տոնուսի փոփոխությունները կապված վեգետատիվ նյարդային և էնդոկրին համակարգերի, ինչպես նաև անոթաշարժ կենտրոնի ֆունկցիայի խանգարումների հետ: Տարբեր ծագման հիպոտոնիաների դեպքերի ուսումնասիրումը ցույց է տվել կլինիկական պրակտիկայում նրա մեծ հաճախականությունը: Մշակվել են հիպոտոնիայի պատճառագիտության, ախտածնության և կլինիկայի հարցերը [21]: Բուժման ընթացքում չորահատուկ տեղ էր տրվում կլիմայաբուժությանը, ջրաբուժությանը, հանքային ջրերին, իսկ դեղանյութերից՝ էֆեդրինի կիրառմանը: Բացահայտվել է սիրտ-անոթային համակարգի ֆունկցիայի որոշման ժամանակ արյան նվազագույն, առավելագույն և միջին դինամիկ ճնշման, ինչպես նաև օսցիլոմետրիկ գործակցի դերը: Մեծ տեղ էր տրվում միջին ճնշմանը, որպես կայուն մեծության, որը որոշ մակարդակի վրա է պահում կենտրոնի և պերիֆերիայի փոխհարաբերությունը: Սրտային հիվանդների մոտ միջին ճնշման փոփոխական դառնալը դիտվում էր որպես սիրտ-անոթային համակարգի ֆունկցիոնալ փոփոխությունների ցուցանիշ, անկախ գոյություն ունեցող ձևաբանական փոփոխություններից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գոյություն ունեն երակային ճնշման հինգ տեսակներ՝ նորմալ, դինամիկ բարձրացած և իջած, ստատիկ բարձրացած և իջած: Սրտային հիվանդների հարկադրական դիրքի ժամանակ բարձրանում է երակային ճնշումը, պակասում պահեստային արյան քանակը և դանդաղում

արչան հոսքը Այդ տեսանկյունով էր բացատրվում այն փաստը, որ դեկտեմբերին սրառչին հիվանդները իրենց ավելի լավ են զգում, երբ ընդունում են ուղղահայաց դիրք։ Արտալի հետաքրքրություն են ներկայացնում նաև այն աշխատանքները, որոնք վերաբերում են թոքային որոշ հիվանդությունների ժամանակ սրտի զործունեության փոփոխությունների և արչան հոսքի արագության կլինիկական նշանակության բացահայտմանը։ Արտալի և նրա ժամանակի նաև որոշ հիվանդությունների ժամանակ էլեկտրատադրական տեղաշարժերը, մասնավորապես ձգվող մալարիայի ժամանակ՝ Մալարիայի համարյա բոլոր ձևերի ժամանակ կլինիկական երևույթների վառացման հետ արձանագրվել է նաև դիստրոֆիկ փոփոխությունների հետևանքով սխտայիկ շրջանի տեսողության երկարում, սրտի սրտամկանի կծկողական հատկության փոփոխման հետևանք [22, էջ 284—291]։ էլեկտրատադրական փոփոխություններ են նկատվել նաև Ինֆոլ տոտալի հիվանդների ծայրամասային անոթների շրջանում։ Արտալի և նրա ժամանակի հետևանքով առաջացած կապիլյարոսկոպիկ փոփոխությունները Այդ փոփոխությունները ունեն բավական բնորոշ պատկեր, որ կախված էին հիվանդության կլինիկական տեսակից և բարդության աստիճանից։ Լուրջ աշխատանքներ են կատարվել սրտամկանի ինֆարկտի կլինիկական ախտանշանների, կրծքային հեղձուկի և սրտի պտկաձև անոթների խցանման ժամանակ տարբերակիչ ախտորոշման ուղղությամբ։ Անհրաժեշտ էր համարվում սրտամկանի ինֆարկտի ախտորոշումը զարձնել ոչ թե առանձին անհատների, այլ բոլոր թերապևտների սեփականությունը [23, էջ 127—136]։

Արտալի և նրա ժամանակի աղմուկների ծագման խրթին հարցով, Լ. Ա. Հովհաննիսյանը դալիս է այն համոզման, որ աղմուկի դուրսացման հիմնական գործոնը արչան հոսքի արագությունն է, իսկ օրգանական ախտահարումների ժամանակ արչան հոսքի արգելիչ հետևանքով հոսքի արագությունն ավելի է մեծանում։ Ապացուցվել է նաև, որ սրտի և անոթների պատերը շին մասնակցում ձայնագոյացմանը, սակայն նրանց ֆիզիկական դրությունը ազդում է հնչյունների ակուստիկ հատկության (ուժ, հնչողություն) վրա։ Ստացվում է, որ սիրտ-անոթային աղմուկները ծագում են արչան շարժման տուրբուլենտ բնույթի հետևանքով [24]։ Միաժամանակ կլինիկական դիտումները ցույց են տվել, որ սրտի աղմուկների հիմքում ընկած են փականների կոպիտ կազմափոխությունները։ Սրտի և անոթների արատների ախտորոշման դժվարություններից ելնելով անհրաժեշտ էր համարվում հետազոտման մշակման ենթարկել հետադոման անոթատադրական եղանակներն ու նրանց կիրառման տեխնիկան։

Բնածին արտաների դեպքում, երբ կան արյան շրջանառության անբավարարության չափավոր արտահայտված երևույթներ և բացակայում են բորբոքային պրոցեսները, խորհուրդ էր տրվում կիրառել առողջարանային բուժում, կոփել օրգանիզմը և ընտրել համապատասխան մասնագիտություն: Հետազոտվել են սրտային հիվանդությունների բուժման նպատակով կիրառվող դեղապատրաստուկների օգտագործման արդյունքները: Ուսումնասիրվել է մագնեզիումի սուլֆատի ազդեցությունը բրոնխային ասթմայի, հիպոտոնիայի, սուր նեֆրիտի, պիլորոսպազմի և այլ դեպքերում: Պարզվել է, որ մագնեզիումի սուլֆատի ներարկումները վերացնում են սրտի շրջանի ցավերը: Դա հիմք հանդիսացավ այն օգտագործելու ինչպես բուժման, այնպես էլ պրակտիկ օրգանակալե և ֆունկցիոնալ ցավերի տարբերիչ ախտորոշման նպատակով [25, էջ 270—274]: Մագնեզիալ թերապիան լավ արդյունք էր տալիս նաև սուր նեֆրիտների սկզբնական շրջանում, իսկ խրոնիկ նեֆրիտների ժամանակ ոչ բոլոր դեպքերում էր լինում լավացում, սակայն հիվանդները դուրս էին դալիս նախաուրեմիկ վիճակից: Այդ աշխատանքները հիմք հանդիսացան, որպեսզի մագնեզիումի սուլֆատի կիրառումը խրոնիկ նեֆրիտների ժամանակ համարվի նախազդուշական միջոց: Հաշվի առնելով սիրտ-անոթային հիվանդությունների խրոնիկական ընթացքը և նրանց բուժման կլինայական պայմանների ու հանքային ջրերի դերը, ուսումնասիրություններ են կատարվել բացահայտելու հանրապետության բուժավայրերի ու հանքային ջրերի դերն ու արդյունավետությունը: Այդ աշխատանքներն ամրապնդեցին Արզնու փառքը որպես սրտային առողջարան՝ նրան տալով համաժողովրդական ճանաչում: Միաժամանակ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ «Ջերմուկ» հանքային ջրի ազդեցության տակ մեծանում են շրջող արյան թանակը, սրտի հարվածային ու բուսական ժավալները [26]:

Սիրտ-թոքային հիվանդություններից կլինիկական պրակտիկայում բազմիցս ախտորոշվել և ուսումնասիրվել են Այերցի հիվանդությունը [27, էջ 178—183], թոքերի աբսցեսը, թոքերի սիֆիլիսը, թոքամզի հրազենային ծագման թաբախային բորբոքումները, թոքերի էխսինոկոկոզը: Ախտաբանա-անատոմիական դրոսկյան ժամանակ առաջանում է թոքային զարկերակի և նրա ճյուղերի կարծրախտ: Ամենահիմնական ազդակը շնչառական փոփոխությունն է, որ ստեղծում է անբավարար օդափոխանակություն: Հիվանդության առաջացմանը օժանդակում են արյան փոքր շրջանառությունում ճնշման բարձրացումը, վարակը և թուլները, որոնք ազդելով թոքային զարկերակի պատերի վրա առաջացնում են կարծրախտ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թոքերի թաբախակույտը կարող է ընթանալ տարբեր ձևերով և որ ընթացքի վրա

կարևոր դեր է խաղում թարախակույտի տեղադրությունը: Բուժման ընթացքում պահանջվում էր խիտ անհատական մոտեցում, կախված հիվանդության ձևից, ընթացքից ու հիվանդի տարիքից:

Ուսումնասիրվել են նաև սեմատիզմը և ինֆեկցիոն ալլ ծագման հոգախտերը, ալլ թվում՝ խրոնիկ բազմահոդաբորբերի բուժման արդյունավետությունը Արզնի ատոլոգարանում: Ալլ աշխատանքները ցույց են տվել, որ հոգախտերի ծագման գործում կրեմն դեր է խաղում նաև մալարիան, ուստի առաջարկվում էր բալնոթերապիայի հետ միաժամանակ նշանակել նաև հակամալարիային միջոցներ: Հոգախտերի բուժման ժամանակ դրական արդյունք էր ստացվում նաև «Արզնի» հանրային ջրի ընդունումից: Կլինիկական պրակտիկայում կրեմն թերապևտները առիթ էին ունենում հանդիպելու սեմատիզմի առիպիկ ձևերի հետ, որոնք ընթանում էին թորային, որովայնային և խառը արտահայտություններով, իսկ դա, անկասկած, դժվարացնում էր հիվանդների ախտորոշման և բուժման գործը: Ռեմատիզմի առիպիկ ձևերի ախտորոշման ժամանակ հաշվի էին առնում նախկինում տեղի ունեցած սեմատիկ գրոհները, սրտի, անոթների, հոդերի ախտաբանական փոփոխությունները և հակասեմատիկ միջոցների օգտագործումից ստացված արդյունքը [28, էջ 60—65]: Բուժիչ և կանխարգելիչ մեծ նշանակություն էր տրվում Բուլոյի հիվանդության ձգձգվող տեսակների դեպքում նշագեղձերի կնակիկացիային [29, էջ 23—26]:

Կլինիկական պրակտիկայում կիրառություն էր գտել հոդաբորբերի բուժման աուտոհեմոթերապիայի ներմաշկային եղանակը, որը տվել էր գրական արդյունք: Մեծ դժվարությունների հետ էր կապված որովայնի օրգանների հիվանդությունների ախտորոշումը, ուստի Լ. Ա. Հովհաննիսյանը գրադվում է աղետամոռքային տրակտի մեթոդական շոշափման հարցերով [30, էջ 199—207]: Միաժամանակ մշակվել է ներորովայնային ուռուցքների ախտորոշման հարցը, որը մեծաքանակ նյութի հիման վրա տվել է բավարար արդյունք: Ուշագրության են արժանացել նաև ստամոքսի և 12-մատնյա աղիի խոցային հիվանդության պատճառագիտության, կլինիկայի ու բուժման հարցերը: Բացահայտվել է մալարիայի հետևանքով ստամոքսի արյունատար անոթների խցանման և խոցային հիվանդության ծագման հնարավորությունը: Այն կարծիքն է հայտնվել, որ շնչած հիվանդությունն ընթանում է տեղային արտահայտված երևույթներով, բայց դա, ըստ էության, ընդհանուր օրգանիզմի հիվանդություն է [31, էջ 9—19, 9—14]: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պատերազմի տարիներին խոցային հիվանդությունները հաճախակի են դառնում (հատկապես դինժառալոգների մոտ): Հիվանդության կլինիկական արտահայտությունը բնութա-

գրվում էր ցավերի ու մի շարք ախտանշանների կայունությամբ և հոս-
պիտալային բուժման ժամկետի երկարացմամբ: Ցավային ախտանիշի
կայունությունը պահանջում էր ներգործել նյարդային համակարգի վրա
գերազանցապես ֆիզիոթերապևտիկ միջոցներով [32, էջ 43—48]:

Ստամոքսի և 12-մատնյա աղիի խոցերի մեջ գերակշռում էին առա-
ջինները, սակայն սովորաբար ծանր բարդություններ չէին առկա: Կի-
բառվել են բուժման մի շարք եղանակներ, այդ թվում՝ առողջարանա-
յին և քնարուժովյան, որոնք տվել են գոհացուցիչ արդյունքներ: Ա. Ա.
Մելիք-Աղամյանի ղեկավարությամբ մշակվել են Ջերմուկ բուժավայ-
րում հիվանդների բուժման ցուցմունքներն ու հակացուցմունքները:
«Ջերմուկ» հանքային ջուրը հրաշխավորվել է ստամոքսի խրոնիկ հի-
վանդությունների, լյարդի խրոնիկ բորբոքման, նյութափոխանակության
խանգարումների, հոդաբորբերի և այլ ղեպքերում [33, էջ 5—12]: «Ջեր-
մուկը» կարգավորում է ստամոքսի շարժիչ և հյութաղատիչ գործունեու-
թյունը [34, էջ 79—83]:

Գեղորայքային բուժման ժամանակ հատկապես լավ արդյունքներ
են ստացվել բրոմատրոպինի օգտագործումից: Գործնական մեծ հե-
տաքրքրություն էր ներկայացնում խաղողաբուժությունը: Խաղողի տե-
ղական տեսակներից մի քանիսը գիտական փորձարկումներից հետո ե-
րաշխավորվել են իբրև զիհտիկ սնունդ և բուժամիջոց: Ուշադրության են
արժանացել ներդատիչ գեղձերի ախտահարումները, այդ թվում՝ միքսո-
գեման, աղիսոնյան հիվանդությունը, ուսումնասիրվել են նրանց կլի-
նիկայի և բուժման մի քանի հարցեր:

Ուսումնասիրվել է նաև ներքին հիվանդությունների ղեպքում սուբ-
ֆերիլ կայունությունը: Պարզվել է, որ դրանում որոշակի դեր ունեն
ինչպես ինֆեկցիոն (բրուցելոզ, մալարիա, գրիպ), այնպես էլ ոչ ին-
ֆեկցիոն պատճառները: Երկարատև սուբֆերիլ ջերմությունն ընթա-
նում է որևէ օրգան համակարգի կողմից սուբյեկտիվ երևույթներով և
օբյեկտիվ որոշ տվյալներով զուգորդված:

Թերապևտների ուշադրությունից դուրս չի մնացել նաև մարմնա-
կազմի, մասնավորապես անհատի զինամիկ դասակարգման հարցը:
Փորձ է արվել մարդկանց բաժանել առանձին խմբերի ոչ թե նրանց ձևա-
բանական նշանների, այլ զինամիկ մարմնաշարժության, քայլվածքի,
միմիկայի և այլ հատկությունների հիման վրա [35, էջ 1363—1371]:

Ջգալի թվով աշխատանքներ նվիրվել են հանրապետությունում մեծ
տարածում ստացած ճիճվային հիվանդությունների ու զիզնետերիայի
բուժման և կանխարգելման, ինչպես նաև այդ հիվանդությունների ժա-
մանակ օգտագործվող տարբեր ղեղապատրաստումների հարցերին:

Մանրամասն ուսումնասիրվել է հատկապես աղիքային ամեաբիազը (հարուցիչը, կլինիկան և բուժումը) և հրատարակվել մենագրությամբ:

Խղիցիտաֆաների կլինիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ լյամբրիոզ խղիցիտաֆաները ունեն չորահատուկ բնթացք: Հաստատվել է գիղննտերիայի ժամանակ սուլֆանիլամիդների, ինչպես նաև բակտերիոֆագի, С-փրամինի, արյան փոխներարկումների և լիառվեր սնուցման արդյունավետությունը: Մի շարք աշխատանքներ են նվիրվել նաև բուսական համաճարակազդիտություն, կլինիկայի և բուժման հարցերին:

Խոսելով սովետական իշխանության առաջին երեք տասնամյակների ընթացքում թերապիայի զարգացման մասին, հարկ է նշել թերապևտների ավագ սերնդի ներկայացուցիչների ավանդյր: Նրանք նպաստեցին ինչպես գիտական թերապիայի զարգացմանը, այնպես էլ հանրապնատության համար պրակտիկ բժիշկների ու գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը: Է. Ա. Հովհաննիսյանի, Ա. Ա. Մելիք-Աղամյանի, Ռ. Ն. Գյանչեցյանի և այլոց ջանքերով ստեղծվեց հայ թերապևտների գիտական դպրոց, որն իր ներդրումն ունեցավ սովետական բժշկագիտության զարգացման գործում:

В. М. МАТИРОСЯН

РАЗВИТИЕ ТЕРАПИИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

(1920—1950 гг.)

Резюме

За годы Советской власти в Армении достигнуты большие успехи в области организации терапевтической помощи населению и в развитии терапевтической науки. Расширилась сеть медицинских учреждений, открылись терапевтические отделения и клиники, ставшие научными базами для развития терапии. Особенно большая работа проведена в послевоенной пятилетке.

Терапевтами предложены новые способы лечения и диагностики ряда заболеваний. Плодотворные научно-исследовательские работы проведены в области краевых заболеваний, и в первую очередь, малярии. Изучены кардинальные вопросы сердечно-сосудистой, дыхательной системы и желудочно-кишечного тракта. Создана научная школа терапевтов Советской Армении, которая, занимаясь актуальными вопросами современной терапии, способствовала развитию терапевтической науки.

В развитии терапии в республике велики заслуги Л. А. Оганесяна, А. А. Мелик-Адамяна, Р. Н. Гянджецяна, А. Т. Симосяна и др.

Գ Ր Ա Շ Ա Ն Ի Ն Ի Յ Ո Ւ Ր Ե

- 1 Оганесян Л. А. История медицины в Армении, т. 5, Ереван, 1947.
- 2 Հալի. ՍՍՀ ՀԶՄԵ ԿՊԱ, ֆ. 20.
- 3 Հալի. ՍՍՀ ՀԶՄԵ ԿՊԱ, ֆ. 118, ց. 3.
- 4 Փառաշնիշահ Բ. Ս., Հայաստանի առողջապահության պատմություն, Երևան, 1973.
- 5 Состояние здоровья и медицинское обслуживание населения Арм. ССР,— Статистический сборник. Ереван. 1964.
- 6 Գյանջեզյան Բ. Ն., Մալարիայի կիրնիկան, Երևան, 1945.
- 7 Акопян А. А. Третья научная конференция врачей эвакогоспиталей Арм. ССР.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 1—2, Ереван, 1944.
- 8 Нанагулян О. А. Симметрическая гангрена нижних конечностей при малярии.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 3, Ереван, 1945.
- 9 Тер-Исаакян Л. Я. Симбиоз малярии и туберкулеза.—Проблемы туберкулеза, 1935, № 9.
- 10 Геворкян И. Х. Об остром животе при малярии.—Труды третьего Закавказского съезда хирургов, Ереван, 1949.
- 11 Азатян А. Н. К вопросу о влиянии малярии на физическое развитие населения.—Труды третьего съезда по борьбе с малярией и другими тропическими заболеваниями в ССР Армении, Эривань, 1933.
- 12 Бунатян В. П. О нефропатиях малярийного происхождения, кандидатская диссертация, 1940.
- 13 Симосян А. Т., Даниел-Бек Л. Я. О колебаниях в содержании белка и белковых фракций в крови у маляриков.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 4—5, Ереван, 1946.
- 14 Симосян А. Т. О колебаниях в содержании неорганического фосфора в крови при заболеваниях печени.—Труды Ереванского медицинского института, вып. 6, Ереван, 1949.
- 15 Гаспарян Е. Н. Гуморальные сдвиги нервного возбуждения при малярии.—Труды Ереванского медицинского института, вып. 6, Ереван, 1949.
- 16 Арутюнян А. А., Егнарян В. О., Саркисян С., Маркарян А. Результаты массового лечения малярии новым синтетическими препаратами.—Труды 3 Закавказского съезда по борьбе с малярией и другими тропическими заболеваниями, Тбилиси, 1939.
- 17 Оганесян Л. А., Егнарян В. О., О непрерывном комбинированном методе лечения малярии в лихорадочном периоде.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении. вып. 4—5, Ереван, 1946.
- 18 Оганесов Л. А., Фарманян А. К., Даниел-Бек Л. Я. Селезеночная органотерапия как фактор лечения тяжелой малярии и некоторых ее последствий.—Советская медицина, 1940. № 9.

- 19 *Даниел-Бек Л. Я.* Гематологические и биохимические сдвиги при применении железистой диеты у больных с затяжной малярией и метамаларийными заболеваниями, кандидатская диссертация, 1947.
- 20 *Мелик-Адамян А. А.* Горный климат как целебный фактор при малярии.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 4—5, Ереван, 1946.
- 21 *Мелик-Адамян А. А.* Материалы к изучению гипотонического синдрома, докторская диссертация, 1937.
- 22 *Катанян А. А.* Электrokардиографические изменения при первичной и затяжной малярии.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 4—5, Ереван, 1946.
- 23 *Мелик-Адамян А. А.* К прижизненной диагностике инфаркта миокарда.—Сборник научных трудов Ереванского мед. института, вып. I, Ереван, 1940.
- 24 *Оганесян Л. А.* Происхождение шумов сердца, докторская диссертация, 1937.
- 25 *Дарбинян Г. Л.* К клиническому наблюдению над действием серножелезистой магнезии на болевой синдром сердца.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 4—5, Ереван.
- 26 *Асехян В. X.* К вопросу о «плюс» и «минус» декомпенсации, канд. диссертация, 1939.
- 27 *Бунатян В. П.* Случай болезни Айерца.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 3, 1945.
- 28 *Авакян В. М.* К клинике эпидемических форм ревматизма (болезни Буёо).—Труды Ереванского медицинского института, вып. 6, Ереван, 1949.
- 29 *Авакян В. М.* О значении энуклеации миндалин в терапии затяжных форм ревматизма (болезни Буёо).—Советская медицина, 1939, № 14.
- 30 *Հովհաննիսյան Ի. Ա., Ստամբուլ-ազիրային տրակտի մեթոդական շրջանի մասին, ՀՍԽՀ պետ. համալսարանի գիտական տեղեկագիր, Երևան, 1980, № 5:*
- 31 *Մելիք-Աղամյան Ա. Ա., Ստամբուլի և ասաներկոմասնայա ազիրի խոցի հարցի շուրջը, Բժշկական հանդես, 1926, № 1, 1927, № 2:*
- 32 *Гянджецян Р. Н.* Сравнительные данные о заболеваемости язвенной болезнью за последние годы.—Известия Ереванского мед. института и медиц. общества Армении, вып. 1—2, Ереван, 1944.
- 33 *Африкян Б. Л.* Химический состав минеральных вод «Джермук».—Труды Ереванского медицинского института, вып. 6, Ереван, 1949.
- 34 *Манукян Е. Т.* Лечение больных язвенной болезнью желудка и 12-перстной кишки Джермукской минеральной водой.—Сборник трудов республиканской клинической больницы, вып. I, Ереван.
- 35 *Оганесов Л. А.* Опыт динамической классификации личности.—Врачебное дело, 1930, № 19—20.